

636.6
Բ-78

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶՍԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 733

9287

ՊՐՕՖ. Մ. ԲՈՂԳԱՆՈՎ



**ԹՈՒՉՈՒՆՆԵՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ
ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ**

ԲՆԻ ԵՒ ՉՈՒԻ ՈՐՍ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

1897

ես մի անգամ լսեցի գրադարանի գրքի խօսակ-
ցութիւնը փոքրիկ երեխայի հետ և գրի առայ.

Գիրքն ասում էր երեխային. «Միրելի մանուկ,
խնդրում եմ ինձ չՎերցնես կեղտոտ ձեռքերով, ես
սաստիկ կամաչեմ, երբ ուրիշ երեխաներ ինձ մաքուր
չտեսնեն: Մի թող ինձ անձրևի տակ, չէ՞ որ գրքերը
նոյնպէս փոքրիկ երեխաների նման հեշտութեամբ կը-
մբռեն: Ինձ վրայ չզգես կամ նշան չանես ոչ գրչով
և ոչ մատիտով, դա շատ ազեղ է: Կարգալիս էլ ար-
մունկդ մի դնիր երեսիս, սաստիկ ցաւեցնում ես. նոյն-
պէս բաց մի ձգիր ինձ երեսիս վրայ, քեզ էլ դուր չի
գայ, երբ նոյն ձևով հետզ վարւեն ուրիշները:

Թերթերիս մէջ մի գնիր ոչ մատիտ և ոչ էլ որ
և է հաստ իր՝ բացի բարակ թղթերից, որովհետև դը-
րանից կըփչանայ իմ կազմը:

Եթէ կարգալի վերջացրել ես և վախենում ես
կարգացած տեղը կորցնել, եղունկներով նշաններ մի
անիր, այլ պահիր իմ մէջ մի թուղթ կամ գեղեցիկ
ժապաւէն, ծածկիր ինձ և դիր նախկին տեղս: Մի մո-
ռանար, որ քեզանից յետոյ ես դեռ շատ երեխաների
էլ պիտի այցելեմ:

Օգնիր ինձ ֆալ մաքուր և գեղեցիկ:

Իսկ ես կ'օգնեմ քեզ լինել երջանիկ:

B 2002

2011

Իր ամբողջին սիկին Նուճե Գալանքարի յիշատակին ներ

1070-ՀԱՅԵՐԱՊԵՏ ՀԱՎԱՆԹԱՐԻՑ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 133

636.6

530

14-ԲՈ

ՊՐՕՑ. Մ. ԲՈՂԴԱՆՈՎ

R-78

այ

ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

1002
9483

Թարգմ. օր. Ն. ՕՀԱՆԵԱՆ

Բ Ն Ի Ե Ի Չ Ո Ւ Ի Ո Ր Ս



ԹԻՖԼԻՍ

Տպարան Վրաց Հրատ. Ընկ. || Типогр. Груз. Изд. Т—ва.
Лорисъ-Мед. ул., д. № 13.

1897

17228

881 91

1897



**Թ Ռ Չ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի
ԱՇՆԱՆԱՅԻՆ ՏԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ.**

Մեր առաջը մի սարսափելի աղէտի տեսարան է: Հազարաւոր թուչուններ պտտուում են փարոսի շուրջը, դիպչում են նրա լուսամուտների ցանցին և ծովի մէջ են թափուում: Մրրիկը սաստկացաւ: Ամպերը ծածկեցին ամբողջ երկինքը, անձրեւը թափուում է հեղեղի նման. մթուժիւնը ծածկել է կատաղած ծովի մակերևոյթը:

Խեղճ թափառականներ, տառապեալ թրուչնիկներ: Այսպիսի րոպէներում նրանք տասնեակ և հարիւր հազարներով են կորչում, որովհետեւ նրանց յոգնած ու թրջուած թեւերը հրաժարուում են աշխատելուց:

Սարսափելի քամու ուժգին հարուածները ցրուում են երամբ այս ու այն կողմ: Մըթուժեան մէջ լսուում է թշուառների աղա-

Дозволено цензурою. Тифлисъ, 6-го іюня 1897 года.

զաին ու հառաջանքը, իսկ առջևում աստղի նման սպալուում է փարոսը. «այնտեղ, այնտեղ, դէպի լոյս», վերջին անգամ աղակակում են թշուառները:

Բայց աւանդ, այնտեղ նորանց սպասում է ոչ թէ փրկութիւն, այլ կորուստ: Հէնց որ փոքրիկ երամը մօտենում է լապտերազարդ փարոսին՝ թռչունները սկսում են իրանց արշաւանքը. սակայն գլուխները լուսամուտներին են դիպչում, և նրանք մանր քարերի նման թափւում են փրփրադէզ ալիքների մէջ: Իսկ վաղը արեգակը իր պայծառ լոյսով կլուսաւորէ բազմաթիւ և բազմատեսակ թռչունների դիակները:

Այո՛, այսպիսի ըոպէները թռչունների կեանքում իրաւ որ սարսափելի են, բայց և այնպէս այս ըոպէները ամեն աշնան կըրկնւում են. կարելի է հաստատապէս ասել, որ ոչ մի թշնամի չէ կարող այնքան թռչուններ ոչնչացնել՝ որքան աշնանային կատաղի մըրրիկները, որոնք ծովի վրայ են պատահում իրանց թշուառ զոհերին: Մի հարցնող լինի, թէ թռչունները ինչո՞ւ համար են հեռանում այն տեղերից, ուր նրանց կեանքը անվրդով և խաղաղ էր անցնում: Իրաւ, ինչո՞ւ են տեղափոխւում թռչունները:

Իւրաքանչիւր տարի, օգոստոսին, աշնան առաջին նշանները երևալուն պէս՝ մեր թռչունները ճանապարհ են ընկնում: Անտանիքները խմբւում են միասին, երամներ են կազմում և սկսում են թափառել, կարծես թէ առանց մի որևէ նպատակի: Մէկ էլ տեսար՝ յանկարծ մարգագետնի վրայ յայտնուեց արտուտների մի երամ՝ ուր իսկի նըրանց տեղը չէ, կամ լայնատարած անտառների տափարակ տեղերում երևացին դաշտային այս կամ այն թռչնորսները, իսկ այգիներում ու բանջարանոցներում համարեա թէ ամեն օր էլ անակնկալ հիւրեր են լինում: Ահա՛ թէ երբ է թռչնորսների բախտը բանում: Հարկաւոր է միայն, որ նրանք որսալու համար ընտիր տեղ գտնեն և իրանց գործին էլ հըմուտ լինին: Եւ այդպիսով նրանք աշնանը քանի քանի տեսակ թռչուններ են որսում: Բացի տեղական թռչուններից, թռչնորսը թակարդով կամ ականատով, աղեղով կամ ցանցով այնպիսի հազուագիւտ թռչուններ է որսում, որոնց նմանը հազար վերստ տարածութեան վրայ էլ չի գտնուի: Չարմանալին այն է, որ Փրանսիայում աշնանը այնպիսի թռչուններ են նկատւում, որոնք միայն հեռու և ցուրտ Սիբիրիայումն են ապրում. իսկ Անգղիայումն էլ

շատ անգամ ամերիկական թուչունների են պատահել:

Ինչո՞վ բացատրել այս երևոյթը:

Աշունը հասնելուն պէս՝ թուչունների մէջ մի տեսակ իրարանցում, թափառելու անգուսպ ձգտումն է նկատուում: Սիբիրիայի թուչունները սլանում են դէպի Փրանսիա, իսկ ամերիկայինը—դէպի Եւրոպա: Այ՛ն, ամեն աշնան թուչունների աշխարհում երևելի տեղափոխութիւններ են կատարուում: Վաղուց, շատ վաղուց է, որ գիտնական մարդիկ սկսել են փետրաւորների կեանքը ուշադրութեամբ ուսումնասիրել, սակայն միայն վերջին ժամանակներս նրանք հասկացան այդ կեանքը: Ես ձեզ կպատմեմ, թէ ո՞ւր և ինչո՞ւ համար են թուչում թուչունները, և ինչպէս է կատարուում նրանց տեղափոխութիւնը. իսկ դուք ձեր բնակութեան տեղից դիտեցէք, թէ այդ քրնքուշիկ արարածները ինչպէս են ճանապարհորդում: Դրանով դուք կսովորէք լաւ թրուչնորս դառնալ և գուցէ քիչ ժամանակից լետոյ առանձին միջոցներ հնարելով թեթեւացնէք խեղճ թուչունների դժուար և երկար ճանապարհորդութիւնը և նրանցից հազարաւորներին ազատէք կորստից:

Պտուղներ, սոււնկեր քաղելով և այլ ա-

մառնային զուարճութիւնների մէջ մենք բոլորովին չնկատեցինք, թէ ինչպէս ուրախ թրուչունները կամաց-կամաց դադարեցին երգելուց: Անտառները, մացառներն ու դաշտերը դեռ չեն դատարկուել. այնտեղ թուչուններ դեռ ևս շատ կան, բայց նրանք միայն ճուղողւմ են, մոլորուածի նման դէս ու դէն են ընկնում, կարծես թէ երգելն էլ մոռացել են: Շատերը մինչև անգամ թաք են կացել:

Տեսնո՞ւմ ես. միշտ ուրախ, չաչանակիկուն չէ երևում. սոխակի անունն էլ չկայ. իսկ միւսներից ո՞ր մէկին լիշենք, կարծես բոլորն էլ անհետացել են, բայց ընդհակառակը դրանք բոլորն էլ դեռ այստեղ մեզ մօտ են: Դրանք իրանց գործը կատարեցին, ձագուկներ հանեցին, իրանց կարողացածի չափ մեծացրին: Այժմ էլ իրանք պէտք է փետուր փոխեն: Փետուրները մաշուել են, հարկաւոր է հին զգեստը հանել և փոխարէնը նորը և աւելի տաքը հագնել: Ահա դրանով են զբաղուում թուչունները ամառուայ կիսին: Հնացած փետուրները մէկը միւսի ետեւից թափում են, թուչնակը նիհարում է, դառնում է ջղային և վախկոտ: Նա թշնամիներից թագնւում է մի որևէ խոտաւէտ տեղում կամ թփերի տակ: Նա զգում է իր թուլութիւնը և կարծում է,

որ ոչ միայն երգելը, այլև մի փոքրիկ ծրարտունն անգամ կարող է մատնել իրան և թըշնամու ճանկը գցել:

Չափազանց հետաքրքիր երևոյթ է թըշնունների փետուր փոխելը:

Մի երկու-երեք շաբաթուայ ընթացքում թըշնունները կարծես դիւթական զօրութեամբ թափում են իրանց հին փետուրները և դրանց փոխարէն նորերով ծածկուում: Շատ թըշնունների այդ նոր զգեստի գոյնը բոլորովին տարբերուում է գարնանայինից: Գարնանային զգեստի գոյները այնքան ճոխ են, որ մարդու աչքն են շլացնում, մինչդեռ աշնան համեստ հագուստը լինում է գունատ, մոխրագոյն կամ շառատագոյն: Կան թըշնուններ, որոնց փետուրները առաջ սև են լինում, իսկ աշնանը դառնում են սպիտակ:

Կարելի է ենթադրել, որ ձմեռը թըշնունները աւելի յարմար են գտնում սգազգեստ կրելը: Ուղիղ որ այդպէս էլ լինում է: Թըշնունների փետուրները գարունը և ամառը ինչքան էլ որ խայտաճամուկ ներկերով ներկուած լինին՝ այնու ամենայնիւ այդ բազմերանգ փետրաւորները ծառերի և խոտերի մէջ իրանց համար անվտանգ ապաստանարան են գտնում: Մարգագետինների և անտառների

կանաչը աւելի խայտաճամուկ ծաղիկներով է պճնուած լինում, ուստի բազմերանգ փետրաւորները տարուայ այդ եղանակներում միանգամայն ապահով ապաստանարան են ունենում: Բաւական է որ թըշնիկը թփի կամ տերևի տակ սլիուի ու ծաղկով ծածկուի—նա այնուհետև զիջատողի աչքից ու ճանկից ազատ է ու ազատ:

Բայց աշնանը բոլորովին ուրիշ բան է: Խոտերը դալկանում են և ներքև խոնարհուում, ծառերի տերևները դեղնում են և թափուում. անտառներն ու դաշտերը մերկանում են... Թշնամու սուր աչքերից էլ սրտեղ թաք կենայ մեր բազմերանգ թըշնակը: Ուրեմն թըշնունների աշնան հագուստը որքան համեստ լինի իր գոյնով՝ այնքան նա օգտակար է. նա որքան աւելի նմանի դեղին տերևին, դալկացած խոտին, գետնի գոյնին՝ այնքան աւելի ձեռնտու է թըշննի համար: Ահա այդ է թըշնունների գունափոխուելու պատճառը: Եւ դա շատ խելացի բան է, այնպէս չէ: Աշնան հագուստով զգեստաւորուած թըշնիկները աւելի աշխոյժ են և հոգատար: Փետուր փոխելու ժամանակ նրանք սաստիկ թուլանում են. բայց երբ նորից փետրաւորուում են՝ այնուհետև նրանց ախորժակը բացւում է, կար-

ծես ծանր հիւանդութիւնից նոր են առողջացել:

Կերակուր ձեռք բերելու համար թրուչունները սկսում են շարունակ աշխատել: Ինչպէս մենք արգէն առացինք՝ աշնանը թրուչունները խոտերի և տերևների մէջ ունեցած ապաստանարանները հետզհետէ կորցնում են, ուստի և պէտք է կրկնապատկեն իրանց աշխատանքը՝ որպէս զի նոր ապահով բնակարան գտնեն: Սակայն նրանց թշնամիներն էլ քնած չեն, նրանց ախորժակն էլ բացուել է. պաշտպանուելու համար հարկաւոր է ընդհանուր ոյժով դիմադրել. այդ պատճառով էլ գարունը ջոկ-ջոկ ապրող և նոյն խի միմեանց հետ կռուող թռչունները աշնանը նորից հաշտուում, բարեկամանում են և մի տեղ խմբւում: Այդ ժամանակ թէ՛ ծեր, թէ՛ ջահէլ, բոլորն էլ միասին ապրելու պահանջ են զգում և այդ պատճառով էլ կազմում են երամներ:

Մէկ էլ տեսնում ես՝ միացան երկու խմբակ — կարծես իրար խօսք տուին միասին պաշար ձարել:

Այս փոքրիկ երամին հետզհետէ միանում են երրորդը, չորրորդը, հինգերորդը և այլն... նրանց վրայ նայելիս՝ մարդ զարմացած մտա-

ծում է, թէ՛ սրտեղից եկան կազմուեցին այդ ահագին երամները: Այս բազմաթիւ թռչունները անտառների, դաշտերի, մարգագետինների վրայով անցնելիս այնպիսի կարգ ու կանոն են պահպանում, ինչպէս հմուտ զինուորները զօրախաղի ժամանակ: Գու փորձ արա, վախեցրու երամին, և այն ժամանակ խիոյն կբարձրանայ առաջին թռչնակը, ապա երկրորդը, երրորդը, կամ բոլորն էլ միանգամից, և միմեանց սեղմուելով առաջ կսլանան: Ուր որ մինը գնայ՝ այնտեղ էլ միւսները կգնան: Յիրաւի այս տեսակ տեղափոխութիւնը մարդու զարմացնում է:

Ո՞վ չէ տեսել, որ կռուակները կանոնաւոր եռանկիւնաձև երամ կազմելով են երկնքում սլանում և սազերը անկիւնաձև կարգերով են թռչում:

Երամի վրայ ուղղեցէք ձեր հրացանը և արձակեցէք. ի հարկէ վառօդը կռուակներին չի հասնի, բայց այնու ամենայնիւ նրանց բանակը կբանդուի. կռուակները երկիւղից զանազան կողմ կցրուեն, խուճ-խուճ կհաւաքուեն և ապա նորից շրջաններով դէպի վերև կբարձրանան: Բարձրաձայն կունջիւնը ցոյց է տալիս նրանց անհանգստութիւնը: Այդպիսով նրանք շատ ու շատ վերև են բարձրա-

նում... Վերջապէս առաջնորդները համոզուում են որ վտանգը անցաւ, օդի մէջ լսուում է նրանց անախորժ կունչիւնը, որով նրանք իրանց ընկերներին իմաց են տալիս, որ նորից շարք կազմեն: Այնուհետեւ երամը նորից եռանկիւնի ձև է ստանում, մէկը միւսի ետևից իրանց տեղերն են բռնում, իսկ եռանկիւնու առաջը կանգնում է ծեր և փորձուած կուռնկը: Կազմակերպուելուց յետոյ զօրախումբը նորից ճանապարհ է ընկնում և առանց մի աղմուկի, առանց մի աւելորդ աղաղակի առաջ է սլանում օդի միջով:

Երևի զօրագունդը իր շաւիղը գտաւ... այժմ նա հազիւ է նշմարուում, իսկ նրա տեղը հիւսիսից նոր զօրագունդեր յայտնուեցան, որոնք թռչում են հէնց նոյն ուղղութեամբ: Դէհ թռչում են, թող թռչին, Աստուած բարի ճանապարհ տայ, իսկ մենք տեղեկանանք թէ թռչունների երամները աշնան սկզբին, տեղափոխութիւնից առաջ, ինչո՞ւ համար են հաւաքուում: Եւ միթէ իսկապէս նրանք զօրքեր, զօրաբաժիններ ունին իրանց զօրավարներով:

Միթէ թռչունների տեղափոխութիւնը պատերազմական արշաւանք է: Ա՛յ, թռչունները չեն պատերազմում: Նրանց համախըմ-

բուելը պատերազմի համար չէ: Նրանք հասարակ թափառականներ են: Յրտաշունչ քամիները և երկարատև անձրևները խեղճերին իրանց հայրենի երկրից դուրս են քշում և ստիպում են դիմել պանդխտութեան:

Թռչնիկը իր համար կերակուր որոնելիս չէ տեսնում, թէ իր շուրջը ինչ է կատարուում, և թշնամուն շատ դիւրին է նրան գաղտնագողի մօտենալ: Բայց երբ երկու, երեք կամ մի քանի թռչուններ միասին են լինում՝ այն ժամանակ նրանցից մի քանիսը կերակուր են որոնում, իսկ միւսները սրանց պահպանում են: Յայտնի բան է, որ աշխատանքը իրանց մէջ այս կերպ բաժանելով՝ նրանք կարողանում են վտանգից աւելի հեշտութեամբ ազատուել: Սա փոխադարձ օգնութեան ամենահասարակ օրինակն է, որ պատահում է թէ թռչունների և թէ կենդանիների մէջ:

Ահա դրա համար են թռչունները հաւաքուում միասին: Բացի սրանից մի ուրիշ պատճառ էլ կայ, և ահա՛ թէ ինչն է. աշնանը պաշարը հետզհետէ սպառուում է: Քաղցած թռչունների երամները կերակուր ձարելու համար առաւօտից մինչև երեկոյ շարունակ թափառում են այս ու այն կողմ: Վերջապէս նրանք կարող էին սովամահ լինել,

եթէ երկար սպասէին: Բայց ոչ. նրանք այդքան էլ անխելք չեն... Այդ սարսափելի վիճակին չհասնելու համար նրանք օր առաջ թողնում են իրանց հայրենիքը և չուում են օտար երկիրներ: Իւրաքանչիւր երամի մէջ կան մի քանի ծեր և փորձուած թուզուներ, որոնք շատ ու շատ անգամ չուել են ուրիշ տեղ ձմերելու համար:

Այդպիսիները դառնում են երամի առաջնորդներ:

Յիշեցէք թէ թուխը ինչպէս է ման ածում իր ձագուկներին, ինչպէս է կանչում նրանց կերակուր գտնելիս և ինչպէս է նախազգուշացնում վտանգ տեսնելիս: Այդ միևնոյն պարտականութիւնն ունին և առաջնորդները:

Նրանք ծանօթ ճանապարհներով տանում են չուող երամը: Նրանց հրամանով երամը երբեմն-երբեմն կանգ է առնում մի տեղ կերակուր ձարելու, մի ուրիշ տեղ ջուր խմելու կամ գիշերելու համար:

Երբ մի առաջնորդը յոգնում է՝ նրան փոխարինում է միւսը, սրան էլ երրորդը և այլն: Այսպէս են անում և իջևանած տեղերում, այսինքն երբ թուզուները կերակուր որոնելով են զբաղուած՝ առաջնորդները հերթապահ պահպանների դեր են կատարում:

Կան այնպիսի տեղեր, որտեղ թուզուները սիրում են կանգ առնել, և նրանք այդպիսի տեղերում ապրում են մի քանի օր շարունակ, մինչև որ վատ եղանակը նրանց այդ տեղերից էլ հեռացնէ: Միևնոյն ժամանակ կան և այնպիսի տեղեր, ուր երամը երբէք չէ իջևանում:

Այս բանը ամեն մի որսորդի, ամեն մի թուզնորսի քաջ յայտնի է, իսկ բացատրել շատ հեշտ է: Առաջնորդները, առանց նախապէս տեղեակ լինելու՝ իրանց երամը չեն բերի այս կամ այն տեղում իջևանելու: Նրանք մանկուլթիւնից սովորել են իրանց առաջնորդ հայրերից, թէ ո՞ր տեղն է օգտաւէտ, ո՞րը պաշարեղէնով առատ: Եւ այդ տեղեկութիւնները աւանդի նման անցնում են սերունդից սերունդ, ցեղից-ցեղ:

Բանից դուրս է գալիս, որ թուզուներն էլ ունին իրանց աւանդութիւնները և անցեալի յիշատակները: Եւ ուրիշ կերպ էլ չէ կարող լինել:

Երևակայեցէք թէ ինչ կլինէր, եթէ թուզուները առաջի ձիւնը գալիս կամ սառնամանիքի ժամանակ յանկարծ հաւաքուէին միասին և անգիտակցօրէն ճանապարհ ընկնէին: Նրանց մեծ մասը, եթէ ոչ բոլորը, քաղցից կկոտորուէր: Եւ եթէ այս երևույթը

տարեց տարի կրկնուէր՝ այն ժամանակ թըռ-
չուէնները բոլորովին կոչնչանային: Փառք Աս-
տուծոյ, որ գործը այդպէս չէ լինում:

Մենք տեսանք, թէ ինչպէս թուչուէնները
փոխադարձ օգնութեան նպատակով կազմում
են երամներ. տեսանք և այն, որ այս երամ-
ները մտնում են ծեր և փորձուած առաջ-
նորդների իշխանութեան տակ, այնպիսի ա-
ռաջնորդների, որոնք ձմերելու համար շատ
անգամ չուել են իրանց հայրերի և պապերի
առաջնորդութեամբ:

Առաջնորդները անձնական փորձով և պա-
պերի աւանդութեամբ ղեկավարուելով՝ երամ-
ները տանում են ծանօթ տեղերով, որտեղ
պաշարի առատութիւն է, և վերջապէս բերում
հասցնում են այնպիսի տեղեր, ուր թուչու-
էները ամբողջ ձմեռը կարող են կերակրուել
մինչև հետևեալ դարունը:

Մենք արդէն իմացանք թուչուէնների տա-
րազնացութեան պատճառը, տեղեկացանք թէ
նրանք ինչպէս և ինչո՞ւ համար են երամներ
կազմում և թէ մատաղասաները ինչպէս հա-
ւատում են փորձուած առաջնորդներին, հա-
մողուած լինելով, որ վերջինները նրանց կը
պաշտպանեն թէ սովից, թէ ցրտից, թէ չար
թշնամիներից և թէ այլ վտանգից, և վեր-

1001
3846



ջապէս իմացանք, թէ թուչուէնները ինչպէս են
ճանապարհ ընկնում ինչպէս և որտեղ են
յետեից դէպի հեռու և անտառներ:
Այժմ էլ փորձենք պատմել, թէ ինչպէս է կա-
տարւում թուչուէնների տեղափոխութիւնը լայ-
նատարած Ռուսաստանում: Ի հարկէ կարճ
պատմութիւնով չէ կարելի ասել այն ամենը՝
ինչ որ կատարւում է Ռուսաստանի անսահ-
ման տարածութեան վրայ. այդ պատճառով
ես ուզում եմ միայն թուչնորաներին օգնել,
իսկ դուք դիտեցէք ինքներդ: Ի դէպ ասած,
ես բոլորը չեմ իմանում, ուրեմն պարզ է, որ
ձեզ շատ գործ է մնում անելու:

Լայնատարած է Ռուսաստանի դաշտա-
վայրը, ընդարձակ են նրա անտառները, դաշ-
տերն ու տափաստանները. լայն ժապաւէն-
ների նման ձգուած են ջրառատ գետերը:
Այս դաշտավայրի վրայից թուչուէնների երամ-
ները անընդհատ ամպերի նման չեն սահում,
այլ իւրաքանչիւր ցեղ իր առանձին ճանա-
պարհներն ունի: Օրինակ՝ արտուտները Մոս-
կովայի նահանգից թուչում են մի ճանապար-
հով, իսկ Արխանգելի նահանգից մի այլ ճա-
նապարհով: Սպիտակ ծովի ափերում ապրող
թուչուէններից շատ շատերը մի տարով են չը-
ւում, սակայն նրանց երբէք չէք տեսնի Տու-

լա նահանգի վրայով թռչելիս, որովհետև նրանց ճանապարհը Բայթիկ ծովի վրայիցն է: Թէ գիտնականների և թէ թռչնորսի համար այս ճանապարհները ուտումնասիրելը այնքան էլ դիւրին չէ, բայց դուք վերջը կիմանաք, որ այդ աշխատանքը ի զուր չէ անցնում:

Որպէսզի թռչունների տեղափոխութեան մասին մեր յայտնած կարծիքները աւելի հասկանալի լինին՝ մտքով տեղափոխուենք Ռուսաստանի զանազան կողմերը և տեսնենք, թէ այնտեղ թռչունները ինչպէս են ապրում:

Իե՞ն յուլիս ամիսը չվերջացած՝ հիւսիսային սառուցեալ ճախճախուտներում արդէն աշունք է: Կտցարները հագիւ հասակներն առած սկսում են տեղափոխուել: Նրանք և ուրիշ շատ մանր թռչուններ ճանապարհ են ընկնում Պեչորա և Դվինա գետերի վրայով:

Կտցարների զանազան տեսակները, որոնք ապրում էին հիւսիսում՝ յուլիսին արդէն Վօլգա, Կամա և Օկա գետերի եզերքներն են տեղափոխուում. նրանք մինչև անգամ աւելի հեռու, դէպի հարաւ են անցնում Ուկրայնայի կողմը և մինչև օգոստոսի վերջը մնում են այնտեղ:

Հիւսիսային ճախճախուտներից թռչունների այլ և այլ տեսակները մէկը միւսի ետե-

ւից ճանապարհ են ընկնում դէպի միջին և հարաւային Ռուսաստանի լայն գետերը և առատաբեր դաշտերը: Սակայն այս ճախճախուտ տեղերը դեռ ևս թափուր չեն մնացած. շատ թռչուններ մինչև աշնան վերջը շարունակում են այնտեղ մնալ: Միջին Ռուսաստանում առաջին ձիւնը գալու՞ն պէս, սրանք թողնում են իրանց հայրենիքը: Այսպէս է լինում և ամեն տեղ: Բոլոր թռչունները իրանց հայրենիքը երբէք մի անգամից չեն թողնում, այլ հեռանում են մի ցեղը միւսի ետևից, առանձին-առանձին երամներ կազմելով, և դրանցից ամեն մէկը աշխատում է, որքան կարելի է շատ մնալ հայրենի երկրում:

Թռչունների շարժումը սկսում է ոչ միայն ճախճախուտներում, այլ և Ռուսաստանի բոլոր մասերում. երբ հիւսիսային ճախճախուտներից չուում են կտցարները, այդ միւսնոյն ժամանակ ճանապարհ են ընկնում և ծիրանահասերը՝ տաք Մալօրուսիայից: Թռչունների շարժումը գրեթէ միաժամանակ սկսում է թէ Սև ծովի և թէ Սպիտակ ծովի փերում: Թռչունների չուելու կարգը ընդհանրապէս այսպէս է լինում:

Առաջ ճանապարհ են ընկնում միջատակերները, որոնք ընտիր կերակուրով են կե-

րակրուում: Այդպիսիներն են օրինակ՝ ծիրանահաւերը, որոնք որսում են մեղուններ և ուրիշ թաղանթաթևաւորներ: Շուտ ճանապարհ են ընկնում և կկուններն ու ուրիշ թռչունները, որոնք միջատների թրթուրներով են կերակրուում: Գորանց հետևում են սոխակները, կարմրատուտները և միւս միջատակերները: Սրտնք բոլորն էլ թռչում են փոքրիկ երանմներով, վերջալոյսին և արշալոյսին, անցնելով մի անտառից միւս անտառը, ուր մի օրով թաք են կենում հանգստանալու և կերակրուելու համար: Հէնց նոյն ժամանակ գետերի և լճերի ափերում կտցարների, ձկրնկուլների, բաղերի սրածայն աղաղակն է հընչում: Դրանք մեծ աղմուկով թափառում են ամբողջ Ռուսաստանում, կարծես գնչուներ լինին: Աւելի ուշ չուում են սարեակները, մշահաւերը, գլխապտուտները, կուռնկները, սագերը, բաղերը և միւս կտակեր թռչունները: Ոմանք աղմուկ հանելով են թռչում, իսկ ոմանք գաղտագողի—այսինքն իրիկնապահին և գիշեր ժամանակ: Մի քանիսը գետերի վրայով են ճանապարհ ընկնում, մի քանիսն էլ միջագետների, լայնատարած դաշտերի ու տափաստանների վրայով, իսկ միւսները շրջում են տափարակ տեղերում, անտառներ

որոնում, որովհետև ընդարձակ դաշտերի ու տափաստանների վրայով անցնելը նոյնքան դժուար է, որքան և ծովերի:

Աշնանային տարազնացութեան ժամանակ գետերի ու լճերի ափերը, տափաստանի այգիներն ու անտառապատ ձորերը մի առանձին կենդանութիւն են ստանում: Նօվօբօսիայի անտառազուրկ տափաստանների նոյն իսկ յետ ընկած այգիները աշնանը յանկարծ կենդանանում են, լցուելով բազմազան թռչուններով, որոնք ամբողջ ամառուայ ընթացքում բոլորովին չէին երևում:

Սոխակների, շիկահաւերի և ուրիշ սըրանց նման թռչունների երամները մտնում են այգիները, որպէս զի հանգստանան, կերակրուեն, և ապա նորից շարունակեն իրանց ճանապարհը: Այդ երամները հեռանալուն պէս գալիս են նորերը: Այդ ամենը թռչնորսի համար կատարեալ երջանկութիւն է. նա այնքան թռչուններ է որսում, որ երբեմն անկարող է լինում բոլորին տեղաւորցնել և կերակուր հայթայթել: Այժմ մեր միտքը դարձնենք դէպի Վօլգայի գետաբերանը, որտեղ թռչունների իսկական թագաւորութիւնն է: Ամառը այստեղ այնքան շատ թռչուններ են լինում, որ եթէ մէկը հրացան արձակէ՝ նը-

րանք ահագին խմբերով վերև կթռչեն և կխաւարացնեն արեգակը: Երևակայեցէք թէ ինչ է լինում այդտեղ աշնանը՝ երբ տեղական թռչունների մօտ հիւսիսից էլ հիւրեր են գալիս: Թռչունների աղաղակը լցնում է օդը, խեղդում է մարդկանց ձայները, այնպէս որ հարիւր քայլ հեռուից դուք չէք լսի ձեր ընկերոջ խօսակցութիւնը: Ի՞նչ թռչուն ասես՝ որ չկայ այդտեղ: Լճերի, գետերի ու վտակների երեսները ամբողջապէս ծածկւում են ձիւնի պէս սպիտակ կարապների, բադերի, սագերի, ջրասուզակների երամներով: Այդ ջրերի մէջ կանոնաւոր կերպով լողում են հաւալուսների երամները և սուզւում են սև ծովագռաւներ: Ջրի մակերևոյթի վրայ խառն ի խռռն կերպով պտտւում են զանազան տեսակ ձկնկուլներ, եզերքը ծածկւում են կրճուկների, կտցարների, արագիլների խայտաճամուկ խմբերով: Սրանք բոլորն էլ աղմուկ բարձրացնելով, կռուելով, իրար յետ-յետ մըղելով՝ ձուկ են որսում:

Փչեց հիւսիսային ցրտաշունչ քամին, վրայ տուեց ձիւնախառն անձրևը, և այս բոլոր խայտաճամուկ թռչունների խումբը աղմուկ հանելով՝ բարձրանում է օդի մէջ. տեսակները ջոկւում են, երամների են բաժան-

ւում և Կասպից ծովի եզերքով ճանապարհ են ընկնում դէպի հարաւ: Սրանցից մի քանիսը շտապում են, տեղից շուտ են շարժւում, միւսները կամաց-կամաց են հաւաքւում. ոմանք կանոնաւոր շարքեր, անկիւններ, եռանկիւններ են կազմում, ոմանք անկարգ երամներով են թռչում, ոմանք էլ ցրուած են առաջ սլանում: Տեղափոխութեան ժամանակ Կասպից ծովի արևմտեան ափին երամների աղաղակն ու ճուռողիւնը ամբողջ օր ու գիշեր խանգարում են աշնանային օդի խաղաղութիւնը, անհանգստացնում են քաղաքների բնակիչներին և թռչնորսին յակամայից գործի են հրաւիրում: Եւ նա ոչ թէ որսում է, այլ ուղղակի կոտորում է այդ անմեղ զոհերին: Եւ վերջապէս թնջ որսորդութիւն պէտք է լինի՝ երբ յոգնած, թուլացած թռչուններին կարելի է փայտով խփել և հէնց ձեռքով բռնել:

Միայն վերոյիշեալ թռչունները չեն հաւաքւում Կասպից ծովի ափերում: Համարեա թէ ամբողջ արևմտեան Սիբիրիայից, Աւրալեան լեռներից, Պեչորեան երկրից, ամբողջ Աօլգայի ափերից բոլոր մանր երգիչ թռչունները գալիս են այնտեղ: Սրանցից մի քանիսը Կասպից ծովի վրայով ուղևորւում են դէպի Պարսկաստան, միւսները դէպի Կովկաս:

Կուբան և Տերեկ գետերի ափերին փր-
 ուուած խաղողի անթիւ այգիները լցուում են
 տարազնաց թուչուններով, որոնք տափաստան-
 ների վրայով երկար թուչելուց յոգնած՝ կանգ
 են առնում այստեղ և հանգստանում: Հան-
 գստանալուց ու կազդուրուելուց յետոյ ե-
 րամները թարմ ոյժերով նորից ճանապարհ
 են ընկնում դէպի հեռու երկիրներ: Սրանց
 ճանապարհը Կովկասեան լեռների կիրճերի մի-
 ջով է անցնում: Այս սառցապատ լեռներն
 անցնելով՝ նրանք արագութեամբ իջնում են
 Կախէթի ու Վրաստանի գուարթ և հիւրա-
 սէր ձորերի մէջ: Մի առ ժամանակ մնալուց
 յետոյ, ոմանք չուում են դէպի հարաւ—Հայ-
 աստան, իսկ միւսները ամբողջ ձմեռը այդ-
 տեղ են մնում:

Սրանք մեր թուչունների ամենաբախտա-
 ւորներն են: Կասպից ծովը, նոյնպէս և Կով-
 կասը թուչունների համար ամենայարմար և
 ամենաանվտանգ ճանապարհն է: Մեծ վտան-
 գի են ենթարկւում այն թուչունները, որոնք
 չուելիս անցնում են Խրիմով: Սրանց ճանա-
 պարհը իսկ որ ծանր և վտանգաւոր է, որով-
 հետե Սև ծովի վրայից թուչելիս սրանք հան-
 դիպում են աշնան կատաղի մրրիկներին:

Նաւերի և շոգենաւերի տախտակամա-

ները մրրիկի ժամանակ երբեմն ամբողջովին
 ծածկւում են խեղճ փետրաւոր թափառական-
 ներով, որոնք հեռուից լոյս նկատելով՝ հա-
 ւաքում են իրանց վերջին ոյժերը և սլանում
 են դէպի նաւերը, ուր հաւատ ընծայելով
 մարդկանց՝ անձնատուր են լինում նորանց:
 Ամեն տարի բազմաթիւ թուչուններ զոհ են
 գնում Սև ծովի ալիքներին: Շատ շատերը
 պատահամբ հասնում են Սիրիայի եզերքին,
 ուր տեղացի բնակիչները սրանց ուղղակի ձեռ-
 քով են բռնում: Այս տեղերում ամենից շատ
 հալածւում են լորերն ու լորամարդները: Մի
 փոքր հեռու դէպի արևմուտք նկատում ես
 Սև ծովի եզերքով ընթացող թուչունների մի
 մեծ զօրագունդ, որի հայրենիքը միջին և
 արևմտեան Ռուսաստանն է եղել: Այս թուչ-
 ունները անցնելով Դունայ գետը, Բալկա-
 նեան լեռները և Բուլղարիան՝ վերջապէս
 մտնում են Յունաստան և այդ տեղից էլ սը-
 լանում են դէպի Եգիպտոս: Այս շարագաս
 գնդերից Յունաստանում և Միջերկրական ծո-
 վի մէջ շատ թուչուններ են ոչնչանում և
 լոյներին ու Արշիպելագոսի կղզիների բնա-
 կիչներին ձրի կերակուր դառնում:

Այնու ամենայնիւ այդ զօրագնդի վիճա-
 կը դեռ այնքան էլ դառն չէ: Շատ անգամ

ճակատագիրը գորանց խնայում է: Շատ թռչուններ հասնելով Փարաւոնների երկիրը՝ Նեղոս գետի ափերին հանգստանում և հանգիստ կեանք են անց կացնում ամբողջ ձմեռը: Սակայն քնչ նեղութիւն ասես, քնչ հալածանք ասես որ չեն կրում հիւսիս-արեւմտեան Ռուսաստանի, Սկանդինաւիայի ու Գերմանիայի խեղճ թռչունները, որոնք ճանապարհ են ընկնում դէպի օրհնուած Իտալիա: Ամբողջ Եւրոպայում ոչ մի ազգ այնպէս անխնայ կերպով չէ կոտորում թռչուններին՝ ինչպէս իտալացիք են այդ անում: Ծոյլ և անհոգ իտալացիք բուսեղէն կերակուր են գործ ածում: Նրանց երկրում միսը թանկ է, այդ պատճառով էլ նրանք աշնանը վայրի գազանների նման յարձակում են տարագնաց թռչունների վրայ: Մուլթ գիշերով իտալացիք թփերը ծածկում են ցանցերով, վառում են կերօններ, ձեռներն են առնում կոչնակներ և ապասկսում են անխնայ կոտորել քաղցած ու յոգնած թռչուններին, որոնք թփերի, արտերի, խոտերի մէջ ու ծառերի վրայ ապաստանարան էին գտել: Այստեղ ոչ ոքի չեն խնայում, ոչ փամփրկի լորիկին, ոչ սոխակին, ոչ կկուին, ոչ պստիկի շիկահաւին, ոչ տորգիկին և ոչ էլ սարեակին: Ծոյլ իտալացու փորը փառաւոր

կերպով կմարսէ ամեն տեսակ թռչունի միս: Իտալացիք միանգամայն չեն ուզում հասկանալ, թէ ինչ վնաս են հասցնում իրանց հիւսիսային հարևաններին, որոնց տնտեսութիւնը այս թռչուններն էին պահպանում: Այս անգութ սպանդանոցը վաղուցուանից կայ և այժմ էլ շարունակում է: Հռոմէական մեծատարած կայսերութեան քաղաքացիները այս անպատուաբեր ոլորդութեամբ համարեա թէ երկու հազար տարի առաջ էլ պարագում էին: Հարուստ հռովմայեցիները առանձին պահեստներ ունէին, որոնք կոչւում էին «աւիարիա», որտեղ նրանք պահում ու պարարտացնում էին հազարաւոր կոցարներ, սարեակներ ու լորամարզներ:

Պատմութիւնը չիշում է Լուկուլլոսին, որը հռչակուած էր իր խնձուքներով, որոնց ժամանակ ամենաընտիր կերակուրների թուում վայելում էին և սոխակների լեզուներ: Ո՞վ կը հաւատայ, որ սոխակի լեզուն շատ համեղ է: Յայտնի բան է, որ այդ տեսակ լիմար կերակուրը պատրաստում էր միմիայն հարստութեամբ պարծենալու նպատակով: Այժմ իտալացիք Եւրոպայի ամենաազքատ ազգերից մէկն են և ի հարկէ Հռոմի ոչ մի ազնուատուհմ պատրիկի ժառանգ այլևս

չէ վայելում սոխակի լեզու, բայց թուչունների բարբարոսական կոտորածը մինչ օրս էլ շարունակում է Խալիխայում:

Գիտնակաները 1886 թուականի գարնանը Վիեննա քաղաքում առաջին անգամ ժողով գումարեցին խալացոց այդ բարբարոսութեան դէմ մաքառելու նպատակով: Թէ ինչ հետեւանքի կհասնի այդ փորձը՝ ապագայում կը տեսնենք, իսկ այժմ կարելի է համարձակ ասել, որ Ռուսաստանում ոչ մի տեղ չկայ այդ տեսակ անպատուաբեր որսորդութիւն՝ որպիսին է իտալականը: Ահա թէ ինչու համար Կասպից ծովի ափերը, Կովկասի անտառներն ու Հովիտները լցում են անթիւ ու անհամար թուչուններով, որոնք այստեղ խաղող կերպով անց են կացնում ձմեռը:

Ուղիղն ասած՝ մեզ մօտ էլ թուչունների տեղափոխութիւնը առանց մեծ զոհողութեան չէ անցնում: Նրանք ահագին քանակութեամբ կոտորում են սովից կամ ցրտից՝ երբ անձրևից յետոյ յանկարծ սառնամանիք է լինում: Շատ թուչուններ էլ գիշերային փոթորիկի ժամանակ հեռագրաթելերին են դիպչում և սպանւում: Նրանցից շատ շատերին էլ կոտորում են գիշատիչները, որոնք թուչում են նրանց յետևից: Մեզանում թուչնորսութեամբ այնքան

քիչ են պարապում, որ ամեն մի բազէ աւելի շատ թուչուն կոչնչացնէ, քան ամբողջ քաղաքի թուչնորսները: Իէ, ուրեմն պատրաստեցէք աղեղներ, նետեր, ցանցեր և ուրիշ սրանց նման թակարգներ, չմոռանաք վերցնել հետներդ նաև թուչնիկներին զրաւիչ կեր, և գնանք որսալու: Բայց ոչ, դուք մենակ գնացէք որսալու, իսկ ես ձեզ կսովորեցնեմ այն՝ ինչ որ ինքս գիտեմ և ինչ որ բարի մարդկանցից սովորել եմ: Նախ և առաջ պէտք է ման գալ այդում, անտառում, տեղ-տեղ ճահիճներով ծածկուած դաշտերի և մարգագետինների վըրայ և տեսնել, թէ որտեղ են թուչում, որտեղ են կանգ առնում թուչունները կերակուր ճարելու համար: Այդտեղ մաքրեցէք մի բոլորակ հարթ տեղ, որպիսին պատրաստում են հաց կալսելու համար, և այդտեղ թափեցէք գրոււիչ պաշարը, որը լինում է գանազան տեսակ տորդիկների համար ամենից լաւն է սինի պտուղներ, կտակեր թուչունների՝ գեղձանիկների, կարմրակատարների, գրախտապանների, կարմրալանջների և ուրիշ սրանց նմանների համար հարկաւոր է նախադասել կանեփի սերմերը, մինչև անգամ չկալսած կանեփի հասկեր: Վատ չի լինի եթէ բոլորակ հարթած տեղի շուրջը շարէք մի քանի սովորե-

ցրած թռչուններ (ի հարկէ պէտք է նրանց գիշերը հաւաքել)։ կանցնի երկու-երեք օր, և թռչունները ձեր սարքած բոլորակին կընտելանան և դէպի այդ կողմը կսկսին թռչնոտել կերակրուելու համար։ Ահա այդ ժամանակ պատրաստեցէք ականատ կամ ցանցեր և սկսեցէք որսալ։ Բոլորակ տեղ սարքելու ժամանակ հարկաւոր է դարան պատրաստել։ Տաս կամ տասնուհինգ սաժէն հեռաւորութեան վրայ պէտք է վրան խփել և լաւ ծածկել նրան ձիւղերով, այնպէս որ թռչնորսը կարողանայ թաք կենալ նրա մէջ։ Որսալու ամենայարմար միջոցը արեգակի նոր դուրս եկած կամ մութն ընկած միջոցն է։

Կէս օրին թռչունը կուշտ է լինում և թափթփած-գրաւիչ կերակրի հօտն անգամ չէ ցանկանում։ Ամենայաջող ժամանակը այն է, երբ վատ եղանակից յետոյ թռչունները գալիս են դարան պատրաստած տեղերը, ուր նրանց գրաւում է պատրաստի կերակուրը։ Որսի ժամանակ չպէտք է շտապել։ Թռչնորսը ուրքան համբերատար լինի՝ նոյնքան էլ յաջողութիւն կուենայ։ Բայց չափից դուրս դանդաղ լինելն էլ վնասակար է։ Թռչունները շատ շուտ են կշտանում, և եթէ թռչնորսը դանդաղ շարժուի՝ նրանք կարող են թռչել հեռանայ։

Այդ ամենի համար հարկաւոր է ճարպիկութիւն, վարպետութիւն, որ մարդս ստանում է անձնական փորձերով։ Թռչունների երամը որսալուց յետոյ պէտք է նրանց զգուշութեամբ հանել ցանցի տակից՝ որպէսզի փետուրները չճմլուեն, և ապա պէտք է թեւերի ծայրերը կապոտել ու զցել կտաւով ծածկուած վանդակի մէջ։ Կապած թեւերով թռչունը շատ չէ դէս ու դէն ընկնում քաշքշուում, և բանտին շուտ է ընտելանում։ Միւս օրը որսած թռչուններին տեսակների են բաժանում և վատերին ազատ են թողնում թռչելու։ Ամենալաւ որսը բացում է օգոստոսի վերջը՝ երբ ծառերի վրայ տերեւը դողդողալ է սկսում, և շարունակում է ամբողջ սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսները՝ մինչև ձմեռուայ սկիզբը։ Այնուհետև ձմեռուայ սակաւաւորս որսորդութիւնն է սկսում։

ԲՆԻ ԵՒ ԶՈՒԻ ՈՐՍ

Ա

Փոքրիկ բարեկամներս, արդեօք ձեզ լայտնի է, որ թուչունները, շատ քիչ բացառութեամբ՝ ամենաօգտակար կենդանիներից են. գիտէք որ թուչուններն են պահպանում մեր բարիքը, այսինքն մեր այգիներն ու բանջարանոցները, մեր արտն ու անդատանը անթիւ ու անհամար միջատներից ու նրանց վրնասակար թրթուրներից: Կարող եմ ասել, որ եթէ չլինէին թուչունները, այսինքն մեր այգիլաւ բարեկամները՝ այն ժամանակ մենք անկարող կլինէինք թէ հացահատիկներ հաւաքել և թէ պտուղ ու բանջար ունենալ, որոնք ամենաանհրաժեշտ ուտելիքներն են մեզ համար: Միայն չնայելով այդ բանին, չնայելով որ նրանք այդպէս լաւ բարեկամ են մեզ՝

բայց և այնպէս, ինչպէս գիտէք և միշտ էլ տեսնում էք՝ թուչունները մեզանից էլ նոյնպէս վախենում են, որ կարծես մենք նրանց համար մի-մի հրէշ ենք և ոչ թէ օրինաւոր մարդիկ:

Ի՞նչ էք կարծում, թէնչ է զրա պատճառը. թուչուններն ինչո՞ւ են մեզանից այդպէս երկիւղ քաշում. մենք խօսմ նրանց որևէ վատութիւն չենք արել:

Հապա որ ամեն ժամանակ և ամեն տեղ շարունակ թուչունների ետեւից ընկած, անըպատակ կերպով քարուքանդ ենք անում նրանց բները, կամ մէջերից ձուերը հանտում ոչնչացնում և այդպիսով արգելք լինում ձուտեր դուրս գալուն ու շատանալուն, այդ պակաս վատութիւն է: Հէնց այդքանն էլ բաւական է, որ թուչունները մեզ ամենիս իրանց թշնամի համարեն: Եւ իսկապէս պատճառն էլ այդ է, որ վանդակներում բռնուած թուչուններն այնպէս անհանգիստ ու միշտ էլ երկիւղի մէջ են լինում և միայն մեծ դժուարութեամբ և երկար ժամանակամիջոց գերութեան մէջ մնալուց յետոյ՝ հազիւ-հազ քիչ ու միչ ընտելանում են իրանց պահողներին: Սակայն վաղրի թուչունները երբէք այնպէս դիւ-

րահաւատ չեն, ինչպէս որ լինում են ընտա-
նի դարձածները:

Այդ բանի համար սովքեր են մեղաւորը,
մարդիկ, թէ իրանք թուշունները: Ես կապա-
ցուցանեմ, որ մեղաւորը մարդիկ են:

Մարդիկ եթէ հէնց սկզբից որևէ վնաս
չհասցնէին թուշուններին, կամ նրանց բները
քանդելով և կամ ձուերը ոչնչացնելով՝ թու-
շուններն ևս չէին վախենայ մարդկանցից:
Այսպէս, երբ ծովագնացները անյայտ ու ան-
մարդաբնակ կղզիներ գտան՝ մնացին ապշած
ու զարմացած այդ տեղերի բազմաթիւ թու-
շուններից, որոնք ամենևին չէին վախենում
իրանցից, որքան էլ որ մօտենում էին նրանց:

Բայց այդտեղ թնչ կար ապշելու կամ
զարմանալու, ի հարկէ որ ոչինչ: Նրանք չէին
վախենում կամ ահ քաշում, որովհետև նրանք
մարդու մէջ որևէ թշնամական գործողու-
թիւն չէին տեսել դէպի իրանց, ուստի և վրս-
տահ էին, չէին քաշում կամ փախչում՝ երբ
ծովագնացները մօտենում էին նրանց այն-
քան, որ ձեռքի փայտով էլ կարող էին խփել:
Սակայն այդ վստահութիւնը շատ շուտով չը-
քացաւ, երբ կոպիտ ու անմիտ ծովագնացնե-
րը, իրանք էլ չիմանալով թէ ինչո՞ւ՝ բոլորո-
վին աննպատակ կերպով սկսեցին հազարնե-

րով կոտորել ու ոչնչացնել նրանց, ինչպէս որ
չար երեխաներն են ոչնչացնում ձուերը: Թէ-
պէտ իսկն ասած՝ այդպէսներին իսկի չէ կա-
րելի չար սնուանել, որովհետև այդ բանը
նրանք անում են ոչ թէ չարութիւնից, այլ
որ չեն հասկանում իրանց արարմունքի վա-
տութիւնը: Եւ այժմ էլ այդ նոր գտնուած
կղզիների վրայի թուշուններն այնպէս չեն
վախենում մարդկանցից, ինչպէս որ ամեն
տեղ են երկիւղ քաշում:

Եթէ կամենաք՝ արիք հետս գնանք
որսի...

Տեսէք, ուշադրութեամբ նայեցէք այն
ձղնի արանքին: Տեսնում էք այն որքինի—
մամուռի կոյտը: Դա խայտիտների բոյնն է:

Ով գիտէ, ինչքան աշխատանք պիտի գործ
դրուած լինի մի գոյգի թուշնակի կողմից, մին-
չև որ կարողանային իրանց համար այդ բոյնը
հիւսել զանազան չորացած խոտերից ու մագ-
ու-մուզերից: Բնի պատերը դրսի կողմից զար-
դարուած են այն մամուռով, որ բնում է ծա-
ռերի կեղևի վրայ: Բայց նրանք այդպէս զար-
դարել են անշուշտ ոչ թէ պճնասիրութիւնից,
այլ որպէսզի թշնամիների աչքից աւելի ա-
պահով կերպով կարողանան ծածկել իրանց

բոյնը: Բնի մէջ չորս հատ սիրուն, կարմիր շիթերով մոխրագոյն ձուեր կան: Նայեցէք, մարին հէնց նոր է վերագարձել և կամենում է նստել ձուերի վրայ, որպէսզի իր փոքրիկ մարմնով տաքացնի նրանց, որ մէջերից ձուտեր դուրս գան. իսկ այն միւսը, որ ճղան վրայ նստած երգում է՝ արուն է. նա երևի իր մարիին է գովում՝ որ պիտի իրանց համար սիրասուն զաւակներ աշխարհ բերի: Մենք դրանց հանգիստ թողնենք և մեր ճանապարհը շարունակենք:



Ահա մի ուրիշ փոքրիկ բոյն էլ. տեսնում էք, այն՝ որ խիտ ճղների մէջից երևում է:

Ինչ հիանալի բան է, այնպէս չէ: Այդ ևս դրսից զարդարուած է, միայն թէ ուրիշ տեսակ, այսինքն այն ծառի տերևներից ու մամուռից, որի վրայ հիւսուած է բոյնը: Նրա յատակի վրայ հինգ հատ ձու կայ, կապտաւուն, մուգ-կարմիր և փոքրիկ բծերով: Բնի աջ կողմում՝ փետուրները փշաքաղած նստած է սիրուն թռչնակը և բարկացած աղաղակում է. իսկ բնից դէպի ձախ գտնուած խիտ ճղների մէջ երևում է մարի փայտփորը: Ահա հէնց դրա վրայ է բարկանում բնատէր սիրուն կարմրակատարը—բոլոր երգող թռչուններից

ամենագեղեցիկը: Թողէք, նրան մի վախեցնէք. արիք մենք առաջ գնանք:



Ահա այս էլ ձեզ խնդագին հովիտը, շրջապատուած բազմաճիւղ կաղնի, կաղամախի, կէչի, հացի ու չինարի ծառերով: Աստուած իմ, որքան սրախ է այստեղ... Սիրուն ու ակնապարար կանաչով ծածկուած մարգագետնի վրայ տորդիկներն են դաստասում, սարեակները գնում-գալիս. թփերի շուրջը, օդի մէջ իրանց պարն են բռնել ճանճորսակները, ուրախ ու երգիչ թռչնակները՝ ճիւղից ճիւղ են թռչկոտում: Ամեն կողմից ինչ տեսակ թռչնային երգ ասէք լսում է:

Սա կատարելապէս թռչունների մի փոքրիկ քաղաք է: Այստեղ թփերի մէջ շատ քիչ բոյն կայ, իսկ ծառերի վրայ ընդհակառակը լիքն է: Նայեցէք դէպի վեր, կաղնու ծառի վրայ տորդիկների մի ամբողջ բազմութիւն կայ. դրանք ամենքն ևս ճարտարօրէն հիւսել են իրանց բները և ներսից էլ տաւարի աղբով սիրուն կերպով սուաղել: Իսկ հինաւուրց կաղնի, կաղամախի, բարտի և թէղօշի փեչակներում իրանց բներն են դրել սարեակները, քրքիտները, փայտփորները, թուխկատարները. այն-ինչ թփերի մէջ էլ իրանց բը-

ներն են հիւսել շիկահաւերն ու ճանճորսակ
թուչունները:

Բայց այս քնչ բան է կէչու երկու ճղան
արանքինը, կարծես թղթի կտորտանքներով
կպցրած գնդակ լինի:

Ես համոզուած եմ, որ եթէ մի ուրիշ
անգամ դուք թէկուզ քսան անգամ էլ ան-
ցնէիք նրա մօտից՝ դարձեալ չէիք կարող նը-
կատել: Այդ երեւցող գնդակը մշահաւի բոյն
է, որ դրսից ոչ թէ թղթի, այլ կէչու կեղե-
ւով է պատած: Եթէ մօտենանք՝ նրա մէջ
կտեսնենք հազուադէպ, թխակարմիր բծե-
րով, սպիտակ փոքրիկ ձուեր: Իսկ այնտեղ...
սակայն այսպէս մէկ-մէկ լիշերով՝ ծայրն ուր
կերթայ. իսկի կարելի է համարել այն ամենը,
որ գտանք և պիտի գտնենք անտառում,
մարգագետիններում, դաշտերում, գետեզրնե-
րին և կամ տների շուրջը: Անկասկած է, որ
դուք կյոզնէք, փոքրիկ ընթերցողներս, լոկ
կարդալով այն բոլոր տեղեկութիւնները, որ
վերաբերում են այդ գեղեցիկ ու զանազանա-
կերպ փոքրիկ բների մասին, ուր իրանց խայ-
տաբղետ — չլտրպուրիկ ձուերն են դնում մեր
բարեկամ թուչունները: Եւ իսկպէս ձուերի
այդ չլտրպուրիկ լինելն ու զանազանակեր-

պութիւնն է բոլոր չարածճի տղերանց ուշքն
ու միտքը գրաւում, որոնք առանց խղճա-
հարուելու, միայն իրանց զուարճութեան կամ
իրանց ժողովածուն հարստացնելու նպատա-
կով, քարուքանդ են անում և հիմնայտակ
կործանում այդ անմեղ արարածների հազար
ու մի չարչարանքով հիւսած կամ կառուցած
բները — նրանց միակ ունեցած-չունեցածը: Սա-
կայն եթէ չլինէր այդ զանազանակերպութիւ-
նը, և ձուերը մէկը միւսի նման լինէին՝ այն
ժամանակ գուցէ ոչ ոքի մտքով էլ չէր ան-
ցնի նրանց ձեռք տալու, բայց և չէր լինի
նաև այն սիրուն ու ներդաշնակ գեղեցկու-
թիւնը: Ուրեմն որքան լաւ կլինէր, եթէ մենք
խնայէինք այդ անմեղ և միւսնոյն ժամանակ
օգտակար արարածներին:

Ես գիտեմ, որ հիմա ձեր մտքովն անցաւ
և ուզում էք ասել.

— Ուրեմն թուչունները դիտմամբ են ի-
րանց բներն այնպէս շինում, որ իրանց վնաս
հասնի:

Ամենևին ոչ. եթէ դուք հետաքրքրու-
մ էք իմանալ իւրաքանչիւր թուչունի կեանքի
մասին, և իմանայիք թէ ովքեր են նրա թշնա-
միները, որոնց թիւը անչափ շատ է այն ժա-

մանակ բոլորովին կհամոզուէիք, թէ որքան խելքի ու շնորհքի տէր են այդ փոքրիկները: Եթէ դուք ուշի ուշով հետևէիք նրա կեանքին և ծանօթանայիք նրա բազմաթիւ թշնամիների տեսակների հետ՝ իսկոյն գլխի կընկնէիք, որ թուշուներն իրանց բները նրա համար են տեղի նմանութեամբ զարդարում, որպէսզի աննկատելի ու ծածուկ մնան իրանց թշնամիներից: Իսկ ինչ կողմից որ կասկածում են, թէ կարող է յարձակում տեղի ունենալ՝ բների հէնց այդ կողմը աւելի են նմանեցնում տեղադրութեան: Եւ որքան բազմաթիւ ու զանազան են այդ ծածուկ մնալու միջոցները:

Բ

Երկու հարիւրից աւելի հէնց մենակ երգող թուշուն կայ, մի այդքան էլ միւս տեսակներից, որոնք չեն երգում: Իրանցից ամեն մէկը իր բոյնն այնպէս է հիւսում, կառուցանում, կամ հարթացնում, ինչպէս որ գիտէ թէ իր համար և՛ լաւ ու հանգիստ է, և՛ ապահով ու անվնաս: Հետազօտութեան համար որպիսի ընդարձակ ասպարէզ:

Այդտեղ մենք կհանդիպենք և՛ թշնա-

մութեան, և՛ բարեկամութեան, և՛ փոխադարձ օգնութեան գեղեցիկ վարմունքի, և ամենասանամօթ յափշտակութեան տգեղ օրինակի: Որպէսզի հնարաւոր լինի հիմնովին ծանօթանալ այդ գեղեցիկ աշխարհի հետ՝ պէտք է շատ երկար ժամանակ գործ դնել, բայց և շատ մեծ կլինի նաև այն օգուտն ու բաւականութիւնը, որ մարդ կստանայ այդ ծանօթութիւնից:

Սակայն մենք տանից դուրս եկանք բոյն ու ձու որսալու նպատակով, և թէև շատ բներ ու ձուեր պտանք և տեսանք՝ բայց ոչինչ չվերցրինք:

— Էլ ինչո՞ւ համար որսի ելանք, գուցէ հարցնէք:

— Այ, ասեմ թէ ինչո՞ւ: Այս բոյնը հօտեանում էք. նրանում երեք հատ ձու կայ. նրանցից մինը վերցրէք. վերցրէք համարձակ, առանց խղճի խայթի, որովհետև մարին դեռ ևս չէ լրացրել ածելիք ձուի թիւը: Ս.մեն մի թուշուն գիտէ, թէ իր ոյժը ինչքան կպատի, այսինքն ինքը քանի ձագի կարող է կերակրել մինչև շահանալը. ուստի երբ նկատի, որ իր հաշուից մինը պակաս է՝ նա ձեր վերցրածի փոխարէն ուրիշը կածէ: Եւ ինչքան լաւ կը լինէր, եթէ ամենքն էլ այդպէս խելացի կեր-

պով վարուէին, այսինքն իմանային, թէ երբ կարելի է ձու վերցնել իրանց ժողովածուն հարստացնելու, որպէսզի խեղճ թռչունն էլ կարողանար իր ժամանակին անել պակասած ձուն. որովհետև ամեն բան իր ժամանակն ունի: Ուստի քանի ղեռ ձուերը թարմ են և մարին թուխս չէ նստած, եթէ մենք մի-մի հատ վերցնենք տանենք մեր ժողովածուի համար՝ ոչ ոք մեզ կողոպտիչ կամ չար չի անուանի: Իսկ երբ ձուից ճուտեր դուրս գան, շահանան և թռչեն զնան բներից՝ մենք իրաւունք կունենանք նաև այդ բները վերցնելու, որովհետև դրանք այլևս պէտք չեն տէրերին, եկող գարնանը թռչունների գոյգերն իրանց համար նորերը կշինեն. նրանք շատ ջանասէր են, ծուլութիւն ասուած բանը նրանց համար գոյութիւն չունի. նրանք սիրում են միշտ զբաղուած լինել, միշտ աշխատել: Բացի ձուից ու բնից, թէ մենք մի ճուտիկ ևս վերցնենք բնից՝ ոչ ոք մեզ չի նախատի, եթէ միայն պահել իմանանք, կարողանանք կարգին կըլթել նրան: Գլխաւորն այն է, որ այդպէս անելու հանգը մարդ իմանայ: Թէ չէ առանց պահելու կերպն իմանալու եթէ տիրու ճուտեր վերցնենք ու հէնց ինչով ասէք կերակրենք՝ ի հարկէ որ հետևանքը խեղճ անասունների

ոտերը ձգելը պիտի լինի: Ուրեմն եթէ մենք թէ ձուն և բոյնը վերցնենք իր ժամանակին և վերցրած ձագի էլ պահելու կերպը իմանանք՝ այդ կերպով մենք վերաւորած չենք լինի և ոչ մի թռչունի, իսկ ժամանակով էլ թէ ձուերի ու բների մի լիակատար ժողովածու կունենանք և թէ մեր պահած մեծացրած թռչունների կեանքը մօտիկից դիտելով՝ մենք որոշ գաղափար կունենանք նաև նրանց ազատութեան մէջ ապրող ցեղակիցների մասին: Սակայն որպէս զի կարողանանք իմանալ, թէ թռչնակին ինչով և ինչպէս պէտք է կերակրել՝ դրա համար անհրաժեշտ է երկար միջոց թափառել դաշտերում ու անտառներում թռչունների ձագեր հանած ժամանակ և դիտել նրանց վարած կեանքը: Եւ եթէ մենք ուշի ուշով հետևենք նրանց՝ կը համոզուենք, որ բոլորն էլ, թէ միջատակերները և թէ հացահատիկներ ուտողները, ողջ ամառուան ընթացքում, այն է մայիս, յունիս և յուլիս ամիսներին, զբաղուած են միմիայն միջատներ ու դրանց թրթուրներ որոնելով, որոնցով թէ իրանք են կերակրուում և թէ իրանց ճուտիկները: Նոյնպէս կիմանանք, որ հունգեր կամ հացահատիկներ ուտող թռչունների ձագերը, մինչև լաւ շահանալ-թռչելը՝ քանի

փոքր են՝ ոչ մի հացահատիկ չեն ուտում. նրանց կերածը որդեր, միջատներ և դրանց թրթուրներն են:

Պարզ է որ ինչքան էլ աշխատենք՝ էլի չենք կարող այնքան ճանճ որսալ, կամ թըրթուր ճարել, որպէսզի կարելի լինի գոնէ մէկ հատ թռչնակի կուշտ կերակրել:

— Եթէ այդպէս շատ դժուար է, հիմա կասէք, ուրեմն աւելի լաւ է իսկի չձեռնարկել այս բանին:

— Եւ ինչո՞ւ չձեռնարկել, եթէ մենք հաստատ կամենում ենք. բացի դրանից եթէ մենք միմեանց օգնենք և միացած ոյժերով այդ բանն անենք՝ այն ժամանակ ոչ թէ մէկ, այլ նոյն իսկ հարիւրաւոր թռչնակի կարող ենք կուշտ կերակրել: Այդպէս փոքրիկ ձագերի համար ուտելու ամենայարմար կերակուրը մըջիւնների ձուն է, որից շատ կայ անտառներում եղած բների մէջ: Հարկաւոր դէպքում միշտ կարելի է գնալ և հաւաքել... Ինչո՞ւ մնացիք տարակուսած:

— Չէ՞ որ մըջիւնները մեզ կկծոտեն:

— Մթթէ այդպէս վախկոտ էք. ամօթ չէ՞ այդպիսի արգելքի պատճառով գործից յետ կենալ: Կծում են, թող կծեն. շատ-շատ՝ պէտք է մի փոքր կսկծի. ինչ անենք, դուք էլ ցա-

ւին դիմացէք: Ինչ նշանակութիւն կարող է ունենալ քիչ կսկիծը, նոյն իսկ շատ ցաւը՝ եթէ աչքի առաջ ունիք մի լաւ նպատակի հասնել, մի ընտիր գործ գլուխ բերել: Ինչպէս նկատում եմ՝ համոզուեցիք տասձներիցս, շատ ուրախ եմ:

—
Ուրեմն այդպէս, ցաւին ուշադրութիւն չէք դարձնի, այլ կշարունակէք մըջիւնների ձու ժողովելը. իսկ եթէ ձեր ձեռք բերածը այնքան չլինի, որով թռչնակը կշտանայ՝ այդ մի մեծ հոգս չէ. փառք Աստուծու, տանը սպիտակ փափուկ հաց հօ կայ: Բրդեցէք այդ հացի միջուկից թարմ կաթի մէջ, փթրուկ շինեցէք և իսկոյն տուէք թռչնակին որ ուտի, իսկ մնացածը դէն ածեցէք, կամ աւելի լաւ է՝ միւս թռչուններին տուէք եթէ ունէք, միայն թէ յետոյ այլևս թռչնակին չտաք այդ միւսնոյն փթրուկը, որովհետև այդ կերակուրը շատ շուտ է թթւում, որից թըռչնակը վնասուում է և սատկում: Ուրեմն բներից վերցրած փոքրիկ թռչնակների համար ամենալաւ և յարմար կերակուրը մըջիւնների ձուն է և սպիտակ հացի միջուկից ու թարմ կաթից շինած փթրուկը:

Սակայն ինչ ուզում է լինի՝ բայց և

այնպէս դրանց պահելը ահագին գլխացաւանք է: Պէտք է շատ վաղ զարթնել, շուտ-շուտ բայց քիչ-քիչ կերակրել, որովհետև մէկ անգամից շատ չեն կարող ուտել, իսկ եթէ ուտեցնելը մի քիչ ուշանայ՝ քաղցից կստակեն: Մէկ խօսքով՝ պէտք է բնից վերցնելու ժամանակը գիտենալ: Եթէ վերցնենք, երբ դեռ բոլորովին տկոռ են և կոյր՝ այդպէսներին կերակրելը շատ դժուար կլինի. եթէ ուշ վերցնենք, երբ արդէն շահացել ու թռչելու պատրաստ են՝ նոյնպէս լաւ չէ, որովհետև այդպէսները ևս բոլորովին չեն բնտելանում և միշտ էլ երկչոտ են մնում: Վերցնելու ամենայարմար ժամանակն այն է, երբ նրանց մերկ մարմինն սկսում է փետրիկներով ծածկուել, իսկ գլխի վրայ դեռ ևս աղուամազ է լինում մնացած: Այդ միջոցին վերցրածները մարդուց չեն վախենում և շատ շուտով էլ բնտելանում են ձեռքից կերակուր առնելու:

Բնից նոր վերցրած ծագին պէտք է դրնել մի արկղիկի մէջ, որի ներսը պիտի նոյնպիսի յարմարութիւններ ունենայ՝ ինչ որ նրա հայրական բոյնը. նրան դրէք մի հեռաւոր ու ապահով անկիւն, ուր նրան ոչ վախցնող լինի և ոչ էլ—այդ ամենագլխաւորն է—կատուն կարողանայ մօտենալ: Երբ կերակրելու

նպատակով մօտենում էք թռչնակին՝ խելքերիդ փչած մի բան զրուցէք հետը, միայն թէ ոչ բարձր, այլ մեղմ ձայնով, իսկ ձեռքերով ևս ուժգին շարժումներ չանէք: Կերակուրը մօտ տանելիս դիտմամբ թողէք, որ մի մասը արկղի յատակի վրայ թափուի. մի-երկու անգամ այդպէս անելուց յետոյ, նա անշուշտ գլխի կընկնի—կհասկանայ, թէ բանն ինչումն է, և մի քանի օրից յետոյ կսկսի ձեր ձեռքից կտցել: Ամենադժուարը հէնց այդ էր. հէնց որ սկսեց կերակուրն առնել ձեր ձեռքից՝ ուրախացէք. այնուհետև օրը մի քանի անգամ կարելի է կերակուր տալ նրան փոքրիկ ափսէի վրայ ածած, և ապա տեղափոխել դնել վանդակի մէջ: Եւ երբ մի քիչ յետոյ նա սկսի թեկն անել ու թռչկոտել՝ սկսեցէք կրթել նրան ձեր ուղածի պէս. չէ որ նա այժմ ձեզ սիրում է՝ ինչպէս իր հարազատ ծնողին: Այդպէս սովորածին երբ ձեռքով անէք՝ նա իսկոյն կգայ և կնստի ձեր ձեռքի վրայ. նա ամեն տեղ էլ կհետևի ձեզ, կկանգնի ձեր ուսին, ձեր գլխին՝ առանց սխալուելու. մի խումբ մարդկանց մէջ ձեզ կճանաչի և միմիայն ձեզ հաւատ կընծայի: Ուր կամենաք՝ նրան տարէք հետներդ—պատշգամբ, գաւիթ, նոյն իսկ այգի. նա ձեզանից չի հեռանայ, իսկ եթէ հե-

ուանայ էլ՝ կրկին կվերադառնայ: Եւ երբ դուք այդ ամենը տեսնէք աչքով՝ կմնաք ապշած այն չափազանցութեան վրայ, որ կայ ընտելացրած և դրանց ցեղակից վայրի թռչունների մէջ:

Թռչնասէրների համար աւելի արժէք ունին այդպէս պահուած թռչունները, որոնք բացի կրթուած լինելուց՝ նաև առողջ ու երկարակեաց են լինում և դէպի մարդն ունեցած բարեկամութիւնը երևում է ամեն բանի մէջ: Ասածներս հաստատելու համար շատ էլ հեռու չգնանք:

Ես մի պիսականիշ-տորդիկ ունիմ. անցեալ ամառ եմ մեծացրել նրան: Երբ մըտնում եմ թռչնոց՝ նա իսկոյն թռչում գալիս է և մօտիկ գտնուող առարկաներից մէկի վրայ նստում, ուղիղ աչքերիս նայում, հաճօքից թևին-թևին անում և սկսում երգել: Երկու շաբաթով ուրիշ տեղ էի գնացել. երբ վերադարձայ՝ տորդիկը իմ երեխաներից պակաս չուրախացաւ. ամբողջ օրերով հետևում էր ինձ, հէնց որ նստում էի թէյի՝ անմիջապէս գալիս էր մօտս, հացից կտցում, թէյից խմում: Պառկում էի բազմօցի վրայ՝ նա թռչում էր, կրծքիս վեր գալի և չէր հեռանում մինչև քնանալս, թէկուզ այդ տեէր մի ամ-

բողջ գիշեր. թէպէև նրա վրայ մի առանձին ուշադրութիւն էլ չէի դարձնում:

Տեսաք, սրբան հասարակ և հեշտ կերպով կարելի է թռչունների հետ եօլա-գնալ, նրանց վստահութիւնը դրաւել և քիչ փողով ու մի քիչ աւելի նեղութիւն քաշելով շրջապատուել սակաւապէտ, ուրախ ու անկեղծ բարեկամներով: Նոյն վախճանը կունենայ մեզ համար նաև ամեն մի գործ՝ եթէ հարկաւոր ու անհրաժեշտ համբերութեան հետ կմիացնենք նաև հաստատուն կամք և աչքադրած նպատակին հասնելու եռանդ: Ամենագլխաւորն այն է, որ մի գործ կատարելիս, կամ մի բարի նպատակի դիմելիս, խոչընդոտներից չվախենանք և առաջին անգամ հանդիպած անյաջողութիւններից չյուսահատուենք. որովհետև խելք ունեցող մարդը երբէք չպիտի ընկճուի բարոյապէս: Ինչևիցէ:

Մեր թևաւոր բարեկամներից շատերին եմ մեծացրել և զանազան տեսակ շատ թռչունների բնաւորութեան հետ մօտանց ծանօթացել եմ: Փորձով ինչ որ ձեռք եմ բերել՝ կաշխատեմ ձեզ հետ բաժանել:

Թռչուններ կան, որոնց կրթելը շատ և շատ հեշտ է, կան էլ՝ որ չափազանց դժուար է:

Բայց աւելի դժուար է միջատներով կերակրուող և նուրբ կտուց ունեցող փոքրիկ թռչունները. էլի դեռ ոչինչ, քանի մըջիւնների թարմ ձու է ճարուում, սակայն ձմեռը վերին աստիճանի չարչարանք է դրանց կերակրել պահելը: Այն-ինչ՝ հացահատիկներ ուտող թռչունները հեշտութեամբ ընտելանալով դերութեանը՝ հեշտ է նաև այդպիսիներին պահելն ու կրթելը. մանաւանդ աւելի հեշտ է կրթելը այն թռչուններին, որոնք ինչ ասէք ուտում են:

Թռչունը որչափ խելօք է՝ այնքան էլ նա աներկիրւղ է և շատ շուտ է գլխի ընկնում ամեն բանի, ինչ որ ուզում ես անել նրան: Ուտտի ես ձեզ խորհուրդ կտայի, դեռ իբրև փորձ, ձեռնարկէիք կրթելու՝ սարեակ, զանազան տեսակ տորդիկներ, ճայեկ, եկքանիկ, խայտիտ, կարմրալանջ, ոսկեգոծ-դրախտապան. մանաւանդ որ այդ մի տեսակ գեղեցիկ ժողովածու կլինէր ձեզ համար:

Այդ թռչունների մէջ ամենից լիմարը ճայեկն է. սակայն աչքի է ընկնում նրա ունեցած բարեկամութիւնը: Փոքրութիւնից կըրթուած ճայեկին կարելի է բոլորովին թողնել ազատ շրջելու. նա ուր էլ լինի՝ հէնց որ կանչէք, խկոյն կթռչի կգայ մօտերդ և ուր

էլ գնաք՝ կհետևի ձեզ: Ճայեկին կարելի թէ բառեր արտասանել և թէ զանազան երգեր երգել տալ: Տորդիկների երգն էլ վատ չէ, բայց առանձնապէս լաւ են երգում կեռնեխներն ու միւս երգիչ թռչունները, որոնց նոյնպէս կարելի է զանազան երգեր սովորեցնել: Եկքանիկները, խայտիտները, կարմրալանջերը, ոսկեգոծ-դրախտապանները և այլն ամենքից ընդունուած են՝ որպէս լաւ երգիչներ, որոնք կարօտ չեն մեր գովասանքին:

Ուրեմն վախուկ և վայրի թռչունների փոխարէն դուք կարող էք ձեր տունը լքցնել ձեռնասովոր թռչուններով, որոնք ձեզ այնպէս կսիրեն՝ ինչպէս որ կսիրէին իրանց հարազատ ծնողներին. իսկ այդպիսիներին նեղ վանդակներում—գերութեան մէջ պահելու հարկ չկայ, քանի որ դուք կարող էք ազատ թողնել հետներդ ման գալու: Միայն թէ նրանց պէտք է պահպանել կատուներից և չար մարդկանցից:

Թէպէտև ամենից լաւն այն է, որ գարնանը բոլորովին ազատութիւն տաք ձեր այդ փոքրիկ սանիկներին. դրանցից շատերը իրանց բոյնը կհիւսեն ձեր տանը մօտիկ այգում, մարիները ձու կածեն, թուխս կգան և ճու-

տեր կհանեն: Այդ ժամանակ վերցրէք այդ
բնիկը միջի ճուտերով և տեղափոխեցէք ձեր
թռչնոցը: Ծնողները, որ ձեր նախկին սանիկ-
ներն են՝ առանց քաշուելու հետները կգան
իրանց նախկին բնակարանը և իրանք կսկսեն
կերակրել իրանց զաւակներին, որոնք մեծա-
նաչուց յետոյ աւելի շուտով ձեռնասովոր կը
դառնան, աւելի սերտ կկապուեն ձեզ հետ և
աւելի աներկիւղ կլինին՝ քան որ էին իրանց
հայրերն ու մայրերը:

Եւ այդպիսով նրանք տանը ձեզ բաւա-
կանութիւն կպատճառեն իրանց ուրախ և ան-
կեղծ բարեկամութեամբ, իսկ դուքը ձեր
բարիքը կպահպանեն վնասակար միջատներից
ու դրանց աւերիչ թրթուրներից:

Ահա մեզ համար այդպէս լաւ բարեկամ-
ներ են թռչունները:



9287

55

2013

« Ազգային գրադարան »



ML0082618

